ԵԿԵՂԵՑԻ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ԱՄԾԱՏՐՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Ներածություն

Սույն խնդրի քննարկմանն անդրադառնում ենք, քանի որ այն համառորեն վկայում է իր արդիականության մասին, որն արտահայտվում է և հետևյալ իրողությունների շրջանակում.

- *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեության ակտիվացումը, նրա դերի վերականգնումը և սրա հետ կապված Եկեղեցի-պետության հարաբերությունների շրջանակների ընդլայնումը:*
- *Անկախության տարիների ընթացքում Հայաստանի տարածքում գոյություն ունեցած և նորամուտ կրոնական համայնքների, այդ թվում նաև քայքայիչ ու վտանգավոր աղանդավորական շարժումների, գործունեության ակտիվացումն ու հավակնությունների մեծացումը: Որպես վերջինիս հետևանք՝ ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտությունը:*
- *Եվրոպական ընտանիքին ինտեգրվելու ճանապարհին հայոց ազգային ինքնության պահպանման անհրաժեշտությունը:*
- *Ազգային և միջազգային մակարդակներում կրոնական գործոնի դերի մեծացումը: Ազգային մակարդակներում ավանդական կրոնների դերը մեծանում է որպես ազգային-հոգևոր ինքնության ձևավորման (պահպանման) և մշակութաստեղծ ինստիտուտի: Միջազգային հարաբերությունների ու քաղաքականության ասպարեզում կրոնի դերը յուրահատուկ կերպով մեծանում է, քանի որ.*

  ա/ Եվրոպական ընտանիքին ինտեգրվելու ճանապարհին խղճի և դավանանքի ազատության միջազգային նորմին տրվում է սկզբունքային նշանակություն,

  բ/ Միջազգային հարաբերություններում կրոնական ազատությունը հզոր պետությունների ձեռքին վերածվում է վերահսկման և պետությունների ներքին գործերին միջամտելու լծակի:

Այսու, աճող կարևորություն ձեռք բերող այս խնդիրը պահանջում է իրավական լիարժեք կարգավորում: Նկատենք, որ միջազգային շատ մեծ հետաքրքրությունը սույն ոլորտի նկատմամբ մղում է դրա կարգավորումն իրականացնել ծայր աստիճան հավասարակշիռ կերպով: Պետականության ձևավորման ընթացքում միջազգային շահերի գերակշռման դեպքում կարող ենք կորցնել ազգային-պետական ինքնուրույնությունը, հաբված տակ դնել հայոց հինավուրց հոգևոր-սոցիա-

լական միակ ինստիտուտը, ավելին՝ որպես դրա հետևանք կարող ենք կորցնել նաև ազգային ինքնությունը: Այս առումով, հաշվի առնելով քրիստոնեական Եկեղեցու նկատմամբ Արևմտյան գլոբալիզացիոն քաղաքականության մեջ ձևավորվող խիստ հակակրական միտումները, սխալված չենք լինի, եթե միջազգային ճառող հետաքրքրությունն ու ճնշումն այս ոլորտում համեմատենք V դարի Հազկերտի ճնշման հետ... Ջիջումն այս ոլորտում լինելու է միմիայն ազգային ինքնությունն ու այն պահպանող ինստիտուտները թուլացնող քայլ, ուստի մեր մտավորականներից, քաղաքական գործիչներից, դիվանագետներից ու օրենսդիրներից պահանջվում է մտավոր ուժերի ծայր աստիճան լարում և մեծ պատասխանատվություն:

Եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորման հիմքերը

Եկեղեցի-պետություն հարաբերությունները կարգավորելու համար անհրաժեշտ է նախ և առաջ ամրագրել այդ հարաբերությունները կառուցելու հիմքերը: ՀՀ պարագայում որպես այդպիսիք պետք է համարել.

1. Գոյություն ունեցող եկեղեցիներից ու հարանվանություններից յուրաքանչյուրի՝ Հայ ժողովրդի կյանքում և հայոց պետականության հաստատման գործում ունեցած ներդրումը, պատմական դերն ու նշանակությունը, ազգային ավանդական փորձը,
2. Խաղաղության ու անվտանգության ապահովումը,
3. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային այն պայմանագրերը, որոնք վերաբերում են խղճի, դավանանքի, համոզմունքի և խոսքի ազատության իրավունքին, և սույն ոլորտի կարգավորման համաշխարհային փորձը,
4. Այդ հարաբերությունների հայկական ավանդական նախատիպի անշեղ արդիականացումը, մեր սերնդին ավանդված արժեքային համակարգի պահպանումը և անկորուստ փոխանցումը հաջորդ սերունդներին:

1. ՀՀ-ում գործող Եկեղեցիներն ու այլ դավանանքները

ա. Հայոց Եկեղեցու անզուգական դերը

Ընդհանրապես կրոնական դավանանքը ազգային ինքնության և կրոնական կյանքի ու գործունեության, ազգային մշակույթի բոլոր դրսևորումների հիմքն է կազմում:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հայ ժողովրդի և նրա անհատների հոգու փրկության համար հոգ տանելու, նրա հոգևոր առաջնորդը լինելու և նրան իր վախճանաբանական հանգրվանին հասցնելու կոչված, հայ ժողովրդի ապրելակարգի ու ապրելակերպի ձևավորմանը նպաստող, հազարամյակների միջով **հայի ինքնության ժառանգականության անընդհատությունն ապահովող հայկական միակ սոցիալական ինստիտուտն**

է, ինքնատիպ ազգային-հոգևոր համակեցությունը, որը շուրջ երկու հազարամյակ անընդհատ պահպանել է իր իրավահաջորդությունը և շուրջ 600 տարի պետականության բացակայության պայմաններում ապահովել հայ ազգային-հոգևոր համակեցությունը: Չնայած Հայաստանի քաղաքական համակարգերի վերելքներին ու անկմանը, Հայոց Եկեղեցին անհողդողդ ժողովել է հայությանը՝ այդպիսով պայմաններ ստեղծելով քաղաքական համակարգերի հերթական վերականգնման համար:

Ուստի և՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հանդիսանում է.

ա) Պատմականորեն պահպանված, ժամանակների միասնականությունն ապահովող և ներկայումս գործող միակ ազգային-հոգևոր ինստիտուտը,

բ) Հոգևոր-բարոյական-վարքային դաստիարակության միակ ազգային օջախը, որը ապահովել է և կարող է ապահովել ազգային օրենսդրության ձևավորման ու օրենսդրական կարգավորման բարոյական հիմքերը,

գ) Եթե ոչ ամբողջ հայության, ապա նրա ճնշող մեծամասնության հոգևոր միասնության, այսինքն՝ ազգային անվտանգության հիմնական պայմանի, գործուն ապահովողը:

Այսու, այն անփոփոխ է իր կոչմամբ և անհամեմատելի ու անփոխարինելի՝ հայության կյանքում իր ունեցած վաստակով, և ՀՀ քաղաքականությունն ու դրան հենվող օրենսդրությունը պետք է ձևավորվեն հաշվի առնելով այս իրողությունները և դույզն-իսկ չանտեսեն դրանք:

Մեր նախնյաց ավանդը պահպանելու և ներկա ժամանակի մեջ զարգացնելու նպատակով, հարկ ենք համարում հայ ժողովրդի պետական (քաղաքական) ու նվիրապետական (հոգևոր-կրոնական) ներկա կառույցները նորոգել ***այդ կառույցների նախաստիպների արդիականացման ճանապարհով***, այնպես որ նախ բացառվի նախատիպի (հազարամյա արժեհամակարգի) խեղաթյուրումը, ապա նաև արդիականացումն իրականացվի այնպես, որ վերջինս կարողանա լիարժեքորեն գործել ու զարգանալ նաև այսօր ու ապագայում:

բ. Այլ դավանանքներ

ՀՀ-ում գործող ոչ հայկական ազգային կրոններն ու Եկեղեցիներն այս դարաշրջանում ունեն առավելագույնը 150-200 տարվա պատմություն: Դրանք կարելի է պայմանականորեն բաժանել հայ մեծամասնության և ազգային փոքրամասնության խմբերի:

Հայ մեծամասնության դավանանքն իր հերթին բաժանվում է ազգային (Հայոց Եկեղեցի), կաթոլիկ (Հայ Կաթոլիկ Եկեղեցի), բողոքական (ավետարանական, մկրտական, հոգեգալստական, ադվենտիստական հարանվանություններ) դավանանքների և այլ պաշտամունքների (դոգմալիստար աղանդներ՝ եհովականներ, մորմոններ, խարիզմատներ, բահայիներ, մունականներ, սայենթոլոգներ, սայենթիստներ, Վոչման Նիի հետևորդներ, տրանսցենդենտալ մեդիտացիայի հետևորդներ, օրդեններ, բարեգործական կազմակերպություններ և այլն) պատկանողների խմբերի:

Հայաստանի ազգային փոքրամասնություններն ունեն իրենց ազգային կրոնական ուղղությունները: Այսպես, **եզդիները** Հայաստանում հայտնվել են, ապաստան գտնելով Օս-

մանյան Կայսրությունում նրանց նկատմամբ գործադրված բռնություններից և կրոնական ու էթնիկ հալածանքներից: Նրանց դավանանքը արևապաշտությունն է, որի մասին, փաստորեն, պահպանվել են միայն աղոտ պատկերացումներ: Հայաստանի մյուս՝ համեմատաբար խոշոր էթնիկ փոքրամասնությունը՝ **ասորիները**, գերազանցապես հետևում են քրիստոնեական Արևելքի մեկ այլ ինքնատիպ ուղղությանը՝ նեստորականությանը: 19-20-րդ դարերի ընթացքում, եզդիների նման, ասորիների մի մասը ապաստան գտավ Հայաստանում:

Հաջորդ ինքնատիպ կրոնական խումբը **մոլոկաններն** են: Որպես հալածվող աղանդավորական կրոնական խումբ, նրանք ցարական կառավարության կողմից աքսորվել են Այսրկովկաս, այդ թվում նաև Հայաստան: Հայաստանի փոքրաթիվ այլ էթնիկ փոքրամասնությունները պատկանում են այլևայլ կրոնական ավանդական հոսանքների՝ պրավոսլավ (ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ) և կաթոլիկ (լեհեր) քրիստոնեությանը, հունական ուղղափառությանը (հույներ), վրաց ուղղափառությանը (վրացիներ), լյութերական բողոքականությանը (գերմանացիներ), հուդայականությանը (հրեաներ) և այլն: ՀՀ-ում բնակվող ազգային բոլոր փոքրամասնությունները պահպանում են իրենց կրոնները ազատ դավանելու իրավունքը:

ՀՀ տարածքում պատմական հիմքեր չունեցող կրոնական կազմակերպությունների ՀՀ-ում հռչակված խղճի և դավանանքի ազատության իրավունքից օգտվելու հնարավորությունը պետք է ապահովվի միայն Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու եզակի կարգավիճակի շրջանակներում: Այսինքն, նրանք կարող են ապրել և գործել իրենց խղճի համեմատ ընտրած դավանանքով, իրենց հավատակիցների շրջանակում՝ առանց հավաքագրման միջոցով մարդկանց հոգիները խռովելու և որսալու իրավունքի:

Հաշվի առնելով վերոհիշյալը, ՀՀ-ում որպես ավանդական պետք է համարվեն միայն ազգային կրոններն ու դավանանքները: Որպես բացառություն կարող է համարվել թերևս միմիայն «Հայ Կաթոլիկ Եկեղեցին», քանի որ այն ՀՀ-ում ներկայացնում են Մխիթարյան միաբանության ներկայացուցիչները, որոնք անուրանալի ու անկրկնելի դեր են կատարել հայագիտության և հայ մշակույթի զարգացման գործում:

2. Խաղաղության և անվտանգության ապահովումը

Սպառնալիքները

Միջազգային ասպարեզում, ուր գլուխ է բարձրացնում և հաստատվում գլոբալ տոտալիտարիզմի համակարգը, խնդիր է առաջանում կանխելու ազգի այլասերումն ու դեգրադացիան (ծնելիության անկում, ընտանիքների քայքայում, աբորտներ, ավանդական նորմերի կորուստ...): Այս պայմաններում միջազգային հարաբերությունների ձևավորվող համակարգը ցուցադրում է արևմտյան երկրների կողմից իրենց ազգային շահերի հաստատման ձգտումը՝ միաժամանակ վերահսկողություն սահմանելով այլ ազգերի (պետությունների) գոյության խորքային ոլորտների (ինքնության) վրա:

Միաբևեռ աշխարհի ստեղծումը կամ գլոբալացումը պահանջում է շուկայական սկզբունքին խոչընդոտող ավանդական արժեքների արժեզրկում: Այս խնդիրը լուծվում է տեղեկա-

տվական պատերազմի՝ նրա մասը կազմող կրոնական ու մշակութային պատերազմի միջոցով, որն ուղղված է ազգային գոյության բարոյական հիմքերի քայքայմանը, որոնց ակունքը ազգային-ավանդական Եկեղեցիներն են, որոնք և դառնում են հարվածի թիրախ: Ուստի, իրավիճակը թելադրում է քայքայիչ գործընթացներից ազգային արժեքները պաշտպանելու արդյունավետ միջոցների մշակման և կիրարկման անհրաժեշտություն:

Այս պայմաններում ՀՀ-ում Եկեղեցի-պետություն հարաբերությունները, չնայած գործող օրենքին, հաճախ կրում են լոկ իրավիճակային բնույթ, քանզի բացակայում է **հստակ կրոնական քաղաքականությունը**, բացակայում են **համապատասխան իրավական նորմերն ու մեխանիզմները, պետական իշխանության տարբեր ճյուղերի գործողությունների համակարգված բնույթը**:

Ազգային շահերը պաշտպանելիս անհրաժեշտ է պետական իշխանության և հասարակության սերտ համագործակցությունը: Մի կողմից հասարակությունը պետք է գիտակցի որոշ դեպքերում միջազգային քաղաքականության շահերի հակասությունն իր շահերի նկատմամբ, իսկ մյուս կողմից պետությունը պետք է արձանագրի դա պաշտոնական փաստաթղթերում: Դրան պետք է հետևի հաջորդ քայլը. հասարակությունը պետք է մշակի պաշտպանության մեխանիզմները, իսկ պետությունը համապատասխան քաղաքական որոշումներ կայացնի և կյանքի կոչի դրանք: Այսու, կարիք կա հանրային լայն քննարկում ծավալելու (սեմինարներ, ԶԼՄ-երով քննարկումներ, այս ոլորտում լավագույն աշխատանքների պարգևատրում և այլն), որը պետք է խթանեն պետությունը, Հայոց Եկեղեցին, ազգային քաղաքական կուսակցությունները:

Պետությունը պետք է մշակի իր կրոնական քաղաքականությունը, այսինքն՝ հստակորեն տարբերակի իր շահերն ու սպառնալիքները, սահմանի երկարաժամկետ ու կարճաժամկետ նպատակները և դրանց իրագործման որոշակի ռազմավարությունը:

Հայաստանի հասարակության (հայ և ՀՀ-ում բնակվող այլ ժողովուրդների) ավանդական հիմքերի կայունացումը թույլ կտա ամրապնդել Հայաստանը: Այս նպատակով անհատի իրավունքների պաշտպանությանը զուգահեռ հարկ է հարգել և ապահովել մի կողմից տվյալ ժողովրդի հոգևոր ապրելակերպի ինքնորոշման իրավունքը, մյուս կողմից պետության ինքնուրույնության իրավունքը: Այս աշխատանքները պետք է տանել և՛ երկրի ներսում, և՛ դիվանագիտական հարաբերությունների ընթացքում:

Անհրաժեշտ է համապատասխան ճշտումներ կատարել միջազգային հարաբերություններում: Պետք է նպաստել միջազգային ասպարեզում ժողովուրդների կրոնական ինքնության պաշտպանությանը: Եթե միջազգային նորմերը պաշտպանում են անհատի իրավունքները՝ թույլ չտալով հետապնդել վերջինիս իր համոզմունքների համար, ապա այդ նույն համոզմունքներն ունենալու և զարգացնելու ժողովրդի իրավունքը պաշտպանված չէ այլ երկրների միջամտությունից: Պետք է հաշվի առնել, որ **անհատի** խղճի ազատությունն ուղղակիորեն կապված է որոշակի էթնիկական, կրոնական, մշակութային ընդհանրություն ունեցող հասարակական **խմբի** խղճի ազատության և ինքնության պահպանման իրավունքի հետ, քանի որ մարդ անհատը սոցիալական էակ է և անհնար է նրա բացարձակորեն միայնակ գոյությունը: Ուստի, պետք է ապահովվի և երաշխավորվի նաև **ժողովրդի՛** կրոնական ինքնության պաշտպանության իրավունքը և արգելվի որևէ արտաքին միջամտութ-

յուն: Այստեղ լուրջ անելիք ունի հայ դիվանագիտությունը: Այստեղից բխում է, որ օրենքի կիրարկման միատեսակությունը (համահավասարությունը) պահանջող միջազգային նորմը չպետք է շփոթել Եկեղեցի-պետություն հարաբերությունների միատեսակության հետ: Այսինքն՝ կրոնի ոլորտի օրենսդրությունը չպետք է հակասի և վնասի ժողովուրդների կրոնական ինքնությանը:

3. Կրոնի ոլորտին վերաբերող միջազգային նորմերն ու համաշխարհային փորձը

ա. Դավանանքի ազատության միջազգային նորմը

ՀՀ կողմից արդեն իսկ վավերացրած խղճի, դավանանքի, համոզմունքի ազատությունը կարգավորող միջազգային հիմնական պայմանագրերից են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիաները: Համաձայն այս պայմանագրերի՝ երաշխավորվում է յուրաքանչյուր անձի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու, իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ, կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, արարողությունների, ծեսերի և քարոզչության միջոցով արտահայտելու ազատությունը: Ըստ այդմ, օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից՝ այնպիսի հիմքերով, ինչպիսիք են ռասսան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը: Պետությունները պետք է հարգեն երեխայի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, ծնողների իրավունքն ու պարտականությունները՝ երեխայի զարգացող ընդունակություններին համապատասխան, ուղղություն տալու երեխային իր իրավունքներն իրականացնելիս:

Միաժամանակ, ցանկացած իրավունք ուղղակիորեն ենթադրում է նաև դրանից օգտվելու պատասխանատվություն: Դրանք կրկնակի անհրաժեշտություն են նոր ժողովրդավարական երկրներում, որտեղ ձեռք բերված ազատություններն ու իրավունքները կարող են չարաշահվել և վնաս հասցնել այլ անձանց, խմբերի ու հասարակության շահերին: Այս հիմնարար գաղափարը միանգամայն դիպուկ ձևակերպված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 29). **«Յուրաքանչյուր ոք պարտականություններ ունի այն համայնքի առջև, ուր և միայն հնարավոր է նրա անձի ազատ ու լիարժեք զարգացումը»**: Հարկ է, որ սույն դրույթը մեր դիվանագետների կողմից զարգացվի միջազգային ատյաններում:

Քանի որ պետական իշխանությունը պարտավորություններ և պատասխանատվություն է ստանձնում ողջ ժողովրդի և միջազգային հանրության առջև՝ ապահովելու մարդկային հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ապա նրա կողմից միաժամանակ քայ-

լեր են ձեռնարկվում իրավունքների ու ազատությունների իրականացման կանոնակարգման, դրանց չարաշահման դեպքերի կանխման ուղղությամբ, որը, ի վերջո, այլ բան չէ, քան սահմանափակում: Այդ սահմանափակումները ժողովրդավարական հասարակությունում պայմանավորված են այնպիսի արժեքներով, ինչպիսիք են՝ այլոց իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքը երաշխավորելը, բարոյականության, առողջության, հասարակական կարգի, ընդհանուր բարեկեցության, պետական և հասարակական անվտանգության արդարացի պահանջների ապահովումը:

Ազատությունները օրենքով սահմանափակելու որոշակի դեպքերը բխում են ՀՀ վավերացրած նույն միջազգային պայմանագրերից: Սույն սահամափակման հնարավորությունը թույլ է տալիս պետություններին՝ երաշխավորելով իրավունքներն ու ազատությունները, օրենսդրորեն ապահովել կրոնական կազմակերպությունների այնպիսի՛ գործունեությունը, **որը չի՛ հակասի հիշյալ պահանջներին:**

բ. Եկեղեցի-պետություն հարաբերությունների համաշխարհային փորձը

Կարևոր է իմանալ, թե ինչպես է լուծվում Եկեղեցիներին ու կրոնական համայնքներին կարգավիճակներ և դրան համապատասխան արտոնություններ տալու խնդիրը եվրոպական երկրներում, որոնց սահմանադրությունները, որպես կանոն, հռչակում են օրենքի առջև բոլոր կրոնների հավասարության սկզբունքը, թեպետ պետությունները, այնուամենայնիվ, **աջակցություն են ցուցաբերում լոկ ընտրյալ Եկեղեցիներին:** Համաշխարհային հանրությունը մշակել է պետաեկեղեցական հարաբերությունների որոշակի սկզբունքներ, որոնք պաշտպանում են պետության և կրոնական համայնքների շահերը՝ հիանալիորեն տեղավորվելով մարդու իրավունքների ոլորտում գոյություն ունեցող չափորոշիչների շրջանակներում:

Գոյություն ունեն Եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորման երեք հիմնական տիպեր.

ա) **Պետական եկեղեցու մոդելը** (օրինակ՝ Դանիայում, Անգլիայում, Հունաստանում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Նորվեգիայում, այսինքն Եվրամիության անդամ երկրների շուրջ 1/3-ում),

բ) **Եկեղեցու և պետության բաժանված (սեպարացիոն) մոդել** (տարածված է ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Նիդերլանդներում),

գ) **Համագործակցային (չեզոքության) մոդել** (տարածված է Գերմանիայում, Իսպանիայում, Իտալիայում. Բելգիայում, Լյուքսեմբուրգում, Ավստրալիայում, Պորտուգալիայում և այլն):

Արևմուտքի փորձը արդյունավետ կրոնական քաղաքականության օրինակ է տալիս մեզ, որը լիովին համապատասխանում է Եկեղեցու և պետության **տարանջատման սկզբունքին:** Կրոնական կազմակերպությունների հետ հարաբերությունների ոլորտում պետական քաղաքականության կողմից նախապատվություն ձեռք բերած ուղղություններից է տվյալ երկրի համար **պետական կրոնի** կամ **ավանդական Եկեղեցու կարգավիճակի** օրենսդրական ամրագրումը և վերջինիս աջակցության ցուցաբերումը՝ առանց սահմանա-

փակելու մյուսների սահմանադրական իրավունքները: Նման պրակտիկան թույլ է տալիս պետությանը բնակչության հոգևոր ու մշակութային դաստիարակության, ազգային-մշակութային ավանդությունների զարգացման, բարոյականության և որպես արդյունք՝ իրավական մշակույթի բարձրացման, բարոյահոգեբանական և հայրենասիրական կրթության և այլնի կազմակերպման ասպարեզներում հենվել ավանդական կրոնական կազմակերպությունների վրա:

Ինչպես ցույց է տալիս արտերկրյա փորձի ուսումնասիրությունը, գոյություն ունեն պետական կրոնի կամ ավանդական կրոնական կազմակերպության կարգավիճակներ, որոնք միմյանցից որոշակիորեն տարբերվում են: Այսպես, պետական կրոնի առանձնահատուկ հայտանիշներ են համարվում նրա բոլոր ծախսերի պետական ֆինանսավորումը, Եկեղեցու գործերի վարույթի իրականացումը պետական պաշտոնյաների կողմից, պետական գործերին միջամուխ լինելու բացառիկ իրավունքը և այլն: Նման կարգավիճակ ունեն **Նորվեգիայի Եկեղեցին, Դանիայի Եկեղեցին** և **Անգլիկան Եկեղեցին**: Ընդ որում, ոչ ոք նշյալ երկրներին չի համարում «կրոնական», «տոտալիտար» կամ «կղերական» պետություն և ոչ էլ նրանց պարսավում ազգային-կրոնական խտրականության մեջ:

Կրոնական կազմակերպությունների գործունեության կարգավորման պրակտիկայում գոյություն ունեցող կրոնական կազմակերպությունների տարբերակումն ըստ ստեղծման ժամանակի, հետևորդների թվի և երկրով մեկ տարածվածության, արդար մոտեցում է և կիրարկվում է շատ երկրների օրենսդրություններում: Պետական կամ ավանդական Եկեղեցիների օրենսդրական ամրագրումն այդ երկրներում ձևավորվել է պատմականորեն, այն արտահայտում է տվյալ ժողովրդի խորը համոզմունքն առ այն, որ կրոնը և նրա ինստիտուտը բարեշնորհ ազդեցություն է գործում քաղաքականության և հասարակական բարոյականության վրա: Ընդ որում, բոլոր հիշյալ երկրներում երաշխավորված է դավանանքի ազատությունը և պետական կամ ավանդական Եկեղեցու հետ գործում են նաև այլ հարանվանությունները:

Վիճակը նույնն է նաև արաբական երկրներում: Իսլամը պետական կրոն է հռչակված Պակիստանում, Սաուդյան Արաբիայում, Եգիպտոսում, Հորդանանում և այլ երկրներում: Մի շարք երկրներում (Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, Բահրեյն, Միավորված Արաբական Էմիրություններ, Լիբիա, Սուդան, Հորդանան), որոնք բնակեցված են հիմնականում մահմեդականներով, իսլամի՝ որպես պետական կրոնի օրենսդրական ամրագրման կարիքը չկա, քանի որ տիրապետող կրոնի սահմանադրական-իրավական կարգավիճակը հենվում է սովորութենական իրավունքի հզոր պրակտիկայի վրա, որը խորապես արմատավորված է այդ երկրների միջին վիճակագրական քաղաքացու հոգեբանական, պատմական և էթնոմշակութային տեսակի մեջ:

Վերոնշյալ եվրոպական երկրներում կրոնական միավորումների մեծ մասը ձգտում է ապացուցել իր կրոնական բնույթը (նկատենք, որ օրենսդրությունը տարբերակում է փիլիսոփայական, գաղափարական, հոգեբանական և այլ տիպի խմբեր), իսկ պետական մարմինները պահանջում են կազմակերպության կրոնական էության ապացույցներ ներկայացնել: Նման միջոցառումներ ձեռնարկվում են, քանի որ կրոնական կամ հատուկ կարգավի-

ճակի ձեռք բերումը հիմք է հանդիսանում նրանց համար պետության կողմից որոշակի արտոնություններ ստանալու:

Հատուկ կարգավիճակ ստանալու համար, տարբեր երկրներում սահմանվում են տարբեր չափանիշներ: Որպես այդպիսիք են ծառայում հետևորդների որոշակի թվաքանակը, երկրով մեկ տարածված լինելու չափը, բնակչության մեջ իր բարի գործերով հանրաճանաչ լինելը, իրենց գործունեությունն ու ուսմունքը պետությունից չթաքցնելու, երկրում ակնհայտորեն խորը արմատներ ունենալու հանգամանքը, դավանվող կրոնական պրակտիկայի չհակասելը երկրի սոցիալական քաղաքականությանը և այլն:

Սովորական կարգավիճակ ունեցողները մասնավոր կամ քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ են և որևէ արտոնություն չունեն:

Սկզբունքորեն համանման իրավիճակ է տիրում նաև ԱՄՆ-ում, թեև վերջինս հայտնի է իր ազատախոհության ջատագովությամբ, սակայն ճնշումներ է բանեցնում մյուս երկրների վրա՝ նման «խտրականությունից» հրաժարվելու համար: Թեև ԱՄՆ-ում խստորեն անջատված են պետությունն ու Եկեղեցին, սակայն երկրում պահպանվել են կրոնական ավանդույթների բազմաթիվ հետքեր, ինչպես օրինակ՝ Սենատում, դռլարի վրա առկա են «In God we trust», նախագահի երդման տեքստը և այլն: Օրենքի առաջ հավասար լինելով, կրոնական կազմակերպությունները, կախված իրենց կարգավիճակից, ԱՄՆ-ում ունեն արտոնությունների ու մենաշնորհների տարբեր աստիճաններ: Եթե բավական դյուրին է **կրոնական հանրային ընկերության կարգավիճակ** ստանալը, որը սկզբունքորեն չի տարբերվում **սովորական հասարակական միավորման կարգավիճակից**, ապա անհամեմատ դժվար է **Եկեղեցու կարգավիճակ** ստանալը, որը հարկային և այլ արտոնություններ ու մենաշնորհներ է ընձեռում: Այստեղ, մասնավորապես, պահանջվում է ոչ միայն ապացուցել, որ դավանվող հայացքները իսկապես կրոնական են, իսկ կրոնական պրակտիկան չի հակասում սոցիալական քաղաքականությանը, այլև պետք է մանրամասն տեղեկություններ տրվեն, մասնավորապես՝ Եկեղեցու անդամներից պահանջվող կարգապահական նորմերի, եկեղեցական նվիրապետության և քահանաների որակավորման, նոր անդամներ ներգրավելու մեթոդների, եկեղեցական ծառայությունների անցկացման կարգի և այլնի մասին: Այսպիսով, ԱՄՆ-ում իրավաբանական անձի իրավունքներից օգտվող կրոնական միավորումները ևս կարելի է բաժանել սովորական և արտոնյալ կարգավիճակների:

Աղանդների և պաշտամունքների դեմ պայքարի պետական միջոցառումները

1960-ականների վերջերից Արևմտյան հասարակությունում ի հայտ են գալիս մի քանի Նոր կրոնական շարժումներ (**ՆԿՇ**), որոնք հաճախ նույնացվում էին որպես «պաշտամունք» կամ «աղանդ»: Մինչև 1979 թ. միայն որոշ անձինք էին լուրջ ուշադրություն դարձնում նման շարժումներին: Սակայն 1978 թ. նոյեմբերի 18-ին ավելի քան 800 մարդ մահացան Ջոնսթոնում, Գույանայում, որը, ինչպես պարզվեց, եղել է զանգվածային ինքնասպանության հետևանք: Իսկ 1993 թ. ապրիլի 19-ին հեռուստատեսությամբ ցուցադրվեց Դեյվիդ Քորեշի և Դեյվիդականների մասնաճյուղի վերջին ժամերը Վաքոյում և Տեխասում և ամրապնդեց այն տեսակետը, որ «աղանդները վտանգավոր են»: Ի լրումն սրա, «Արևի տաճար» աղանդը ինքնասպանությունների հրահրեց Կանադայում և Շվեյցարիայում, և 1995 թ.

մարտի 20-ին «Աում Սինրիկյեն» նախաձեռնեց իր գազային թունավորումը Տոկիոյի մետրոյում:

1995 թ. նոյեմբերի 16-ին **«Արևի տաճար»** խմբի անդամները դիմեցին զանգվածային ինքնասպանության հարավարևելյան Ֆրանսիայում՝ 13 չափահաս և 3 երեխա մահացան: Պաշտամունքների նկատմամբ վախը սկսեց գերիշխել մասնավորապես Գերմանիայում, Ավստրիայում, Բելգիայում և Ֆրանսիայում: Այս երևույթները խստորեն անհանգստացրեցին նշյալ երկրների իշխանություններին ու հասարակությանը: Արդյունքում այս երկրները ստեղծեցին աղանդների ու պաշտամունքների գործունեությունը հսկող, հետազոտող և միջոցներ մշակող ու առաջարկող պետական ու հասարակական մարմիններ և ընդունեցին հակաաղանդավորական օրենքներ:

Այսպես, **Ավստրալիան** 20.08.1998 թ. ընդունեց «Պաշտամունքի հարցերով զբաղվող Դաշնային կոմիտեի մասին» դաշնային օրենք և ստեղծեց մի կոմիտե, որի խնդիրն է տեղեկացնել այն վտանգի մասին, որը կարող են առաջացնել պաշտամունքները կամ դրանց գործողությունները: **Ավստրիայի** կառավարությունը մինչև օրս տեղեկատվական արշավ է վարում ընդդեմ կրոնական աղանդների, որոնք պոտենցիալ կերպով վնասակար են համարվում անհատի ու հասարակության շահերի տեսանկյունից: **Սոցիալական ապահովության և ծագումնաբանության (սերունդների) նախարարությունը** գրքույկներ է հրատարակում բազմաթիվ չճանաչված կրոնական կազմակերպությունների բացասական գործունեության մասին: **Աղանդներով զբաղվող դաշնային ծառայությունը** աղանդ համարվող կազմակերպությունների մասին տեղեկատվություն է հավաքում և տարածում: Համաձայն օրենքի՝ այդ ծառայությունը անկախ կարգավիճակ ունի, սակայն նրա ղեկավարին նշանակում է Սոցիալական ապահովության և ծագումնաբանության (սերունդների) նախարարը: Ելնելով այն հանգամանքից, որ խնդիրները շարունակում են աճել, այս ծառայությունը ընդլայնեց իր աշխատակազմը:

Բելգիան 02.06.98 թ. ընդունեց «Վտանգավոր աղանդավորական կազմակերպությունների մասին տեղեկատվության հավաքման ու վերլուծման կենտրոնի և վտանգավոր աղանդավորական կազմակերպությունների դեմ պայքարի համակարգման վարչության աշխատակազմի մասին» օրենքը և «Վտանգավոր աղանդավորական կազմակերպությունների մասին տեղեկատվության հավաքման և վերլուծման կենտրոնի» մասին որոշումը: Համաձայն այս ակտերի՝ ստեղծվեց Արդարադատության նախարարության հետ գործակցող անկախ համապատասխան «Կենտրոն» և Վտանգավոր աղանդավորական կազմակերպությունների դեմ մղվող պայքարը համակարգող գործադիր մարմին:

30.05.01 թ. **Ֆրանսիան** ընդունեց իր հակապաշտամունքային օրենքը, իսկ 07.10.98 թ. վարչապետի թիվ 98.890 որոշմամբ ստեղծեց «Աղանդների դեմ պայքարի միջնախարարական առաքելությունը»: Աղանդների ու պաշտամունքների վտանգավոր գործունեության հետազոտությամբ զբաղվելու և միջոցառումներ մշակելու առաքելությամբ ստեղծվեց նաև խորհրդարանական հանձնաժողով:

1996 թ. **Գերմանիայի** Բունդեստագը ստեղծեց իր **Հետաքննող հանձնաժողովը**, որը քննում է աղանդների թեման, պատրաստում և հրապարակում իր ամենամյա զեկույցը:

Այսպիսով, տեսնում ենք, որ այն, ինչը մեր պարագայում համարում են խտրականություն կրոնական կազմակերպությունների հանդեպ, այդպիսին չի համարվում Արևմուտքի երկրների համար, ուստի, այս փաստն ինքնին խտրականություն է:

Ընդհանրապես, տարբերակումները դեռևս չեն նշանակում կամ համենայն դեպս միշտ չէ, որ նշանակում են խտրականության դրսևորում, եթե դրանք բխում են որոշակի հիմնավորումներից: Այսպես, օրինակ, բոլոր երկրներում էլ ակներև տարբերակումներ են դրվում աշխատանքի ընդունվողների միջև՝ բազմաթիվ դիմողներից ընտրվում են անհամեմատ քչերը, որոնք առանձնանում են իրենց մասնագիտական գիտելիքներով ու հմտություններով, փորձառությամբ, երաշխավորագրերով և այլն, որով և բավարարում են գործատուի պահանջները (սա ևս ազատության դրսևորում է): Նման «մրցույթն» առկա է նաև դրամաշնորհների տրամադրման ոլորտում:

Այս առումով տևական ժամանակաշրջանի մեջ մրցակցությունը կարող է գնալ ոչ թե անձանց, այլ որոշակի հաստատությունների միջև, և նրանք պետք է փորձությունը բռնած լինեն: Այդպիսի հաստատություններից է Եկեղեցին, մանավանդ այնպիսի ժողովուրդների համար, որոնք, կորցնելով իրենց ազգային պետությունները, վերջինիս հիմնական գործառույթները առնչել են իրենց ազգային Եկեղեցուն, և որն այն իրականացրել է պատվով:

Բացի այդ, ընտրությունը անհատներինն է, և մեծամասնության կատարած ընտրությունը կասկածի տակ դնելը ժողովրդավարություն չէ: Մյուս կողմից՝ մեծամասնության այս ընտրությունը չի խանգարում փոքրամասնությանը կատարել իր ընտրությունը և ազատորեն ապրել դրանով: Եթե մեծամասնության ընտրածին տրվում են առավելություններ, դա չի նշանակում, որ փոքրամասնության ընտրածի զարգացումը սահմանափակվում է կամ հետապնդվում, քանզի նվազագույն անհրաժեշտ ազատությունը նրանց համար օրենքով ու գործնականում ապահովվում է: Ինչպես որ հավասար իրավունք է տրվում բոլոր քաղաքացիներին՝ ընտրվել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, բայց հայտ ներկայացրած թեկնածուներից բոլորը չէ, որ ընտրվում են, և իշխանության հնարավորությունը տրվում է հաղթողներին՝ կատարելու ընտրողներին տրված խոստումը և ապահովելու իրեն չընտրողների օրենքով սահմանված իրավունքները:

Կարծում ենք, որ Եկեղեցի-պետություն հարաբերությունների համաշխարհային հիմնական երեք մոդելներից հայոց մեջ ընդունված հարաբերությանը մոտ է առաջինը: Նպատակահարմար է սույն կարգավիճակն ամրագրել ՀՀ բարձրագույն իրավաբանական փաստաթղթում՝ ՀՀ Սահմանադրության մեջ Հայոց Եկեղեցին նշելով որպես եզակի լիազորություններ ու գործառույթներ ունեցող ազգային-հոգևոր հաստատություն:

4. Ավանդական նախատիպի անշեղ արդիականացումը

Եկեղեցու կամ կրոնի ավանդականության չափանիշները

Որևէ գործող Եկեղեցու կամ կրոնի ավանդականությունը և դրա հետ կապված հատուկ կարգավիճակը որոշելիս համաշխարհային պրակտիկայում հաշվի են առնվում մի շարք չափանիշներ, ինչպիսիք են.

ա/ Նրա գործելու տևականությունը,

բ/ Տվյալ ժողովրդի մեջ տարածվածության չափը (հետևորդների քանակը, որոնք նաև հարկատուներն են, որոնց միջոցներով է ձևավորվում պետական բյուջեն),

գ/ Տվյալ երկրի պետականության հաստատման և մշակույթի ձևավորման ու զարգացման գործում նրա ունեցած ներդրումներն ու

դ/ Մատուցած սոցիալական ծառայությունները:

Ելնելով սույն չափանիշներից, ՀՀ-ում ներկայումս գործող Եկեղեցիներից Հայոց Եկեղեցին ա/ ունի մոտ 2000-ամյա գործունեության պրակտիկա, բ/ 1700 տարի շարունակ եղել է տիրապետող միակ դավանանքը և այսօր էլ, թեև դժվար է ճշտել նրա հետևորդների թիվը, սակայն թեկուզև անվանականորեն նրան հարում է ՀՀ բնակչության մոտ 90%-ը, գ/ Հայոց պետականության հաստատման և մշակույթի ձևավորման ու զարգացման գործում նրա ունեցած ներդրումներն անհամեմատելի ու անգերազանահատելի են, ավելին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ամբողջ հայության հոգևոր կենտրոնն է, նրա ինքնության ինստիտուցիոնալ մարմնավորումը, դ/ սոցիալական ծառայությունների մասին հիշատակությունները գալիս են առնվազն Ներսես Մեծ Կաթողիկոսի ժամանակներից:

ՀՀ-ում գործող մյուս կրոնական կազմակերպությունները, ինչպես նշել ենք վերը, ՀՀ-ում առավելագույնը 200 տարի է, ինչ գործում են: Իրենց իսկ տվյալների համաձայն, ունեն հետևորդների հետևյալ մոտավոր քանակը. ավետարանականներ՝ 25 հազար, հոգեգալստական տասից ավելի կազմակերպությունները միասին՝ շուրջ 50 հազար, կաթոլիկները՝ շուրջ 15 հազար, եհովականները՝ շուրջ 20 հազար, խարիզմատները՝ շուրջ 8 հազար: Թվարկվածներից և ոչ մեկը պատմականորեն չէր կարող որևէ նպաստ բերել հայոց պետականության ձևավորմանն ու հաստատմանը, քանի որ այդ տարիքը չունեն: Խորհրդային շրջանում այստեղ եղած այս կրոնական կազմակերպություններից որպես կառույց պահպանվել է միայն Հայոց Եկեղեցին՝ շարունակելով մինչև վերջ կրել բոլշևիկյան բոլոր հալածանքները: Մյուսները սկզբից ի վեր հեռացել են ՀԽՍՀ-ից: Միայն մեկ-երկուսն են, որ որպես անհատներ մնալով Երկրորդ համաշխարհայինից հետո՝ վերականգնել են իրենց կառույցները: Իսկ սոցիալական ծառայությունների առումով ակտիվ են միայն դրսից վերջին տասնամյակում մուտք գործած և արտերկրյա աղբյուրներից սնվող կրոնական խմբերը, որոնք այդ միջոցներով կազմակերպում են իրենց «բարեգործությունները», ամառային ճամբարները և այլ, հաճախ շատ մութ, գործարքները, որոնց արժեքը հայ ժողովրդի ու հայոց պետականության համար դեռևս ճշտման կարիք ունի...

Ակնհայտ է, որ ՀՀ-ում գործող որևէ Եկեղեցի կամ կրոնական կազմակերպություն չի կարող նշյալ չափանիշներից որևէ մեկով անգամ մրցել Հայոց Եկեղեցու հետ:

Հայոց Եկեղեցու կարգավիճակը

Աշխարհում գործող Եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավորման վերը նշված երեք հիմնական տիպերից հայոց մեջ պատմականորեն ձևավորված հարաբերությանը մոտ է առաջինը: Մյուս կողմից, նկատի ունենալով, որ պետական կրոնի հիմնական հայտանիշներից են նրա բոլոր ծախսերի պետական ֆինանսավորումը, Եկեղեցու գործերի վարույթի իրականացումը պետական պաշտոնյաների կողմից, պետական գործերին միջամուխ լինելու բացառիկ իրավունքը, որոնք հայոց միջավայրում բացակայել են առնվազն 600 տարիներ ի վեր, ներկա իրավիճակին առավել համապատասխան է թվում ոչ թե պետական, այլ ավանդական կարգավիճակի համագործակցային մոդելը:

Անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետությունը պաշտպանի.

1. Մեր նախնիների կողմից վաղուց ի վեր ընտրված և մեր ժողովրդին փոխանցված ազգային ողջ ժառանգության, այդ թվում նաև ազգային-կրոնական և ազգային-

բարոյական դաստիարակության իրավունքի կիրարկումը (ՀԱԵ-ն ազգային, գրա-ծելակերպային, ապրելակարգային-կառուցվածքային արժեք է),

2. Հայ ժողովրդին. ա) դավանանքը և համոզմունքը փոխելու շահարկվող իրավունքի հարկադրանքից, բ) կրոնական փոքրամասնության շահերը բռնադատելու սին հերյուրանքներից, ինչպես նաև գ) միջազգային ասպարեզում, որպես աշխարհի մարդկության մեջ փոքրամասնություն կազմող ազգի, իրավունքների ոտնահարումից:

Հարկ է տարանջատել մենաշնորհ ունեցող Հայոց Եկեղեցին մյուս կրոնական կազմակերպություններից, կազմելով տարբեր օրենքներ[1] (կամ օրենքի երկու տարբեր մասեր) կամ կնքել հատուկ պայմանագիր՝ կոնկորդատ՝ ելնելով 2001 թ. ստորագրված Հուշագրի պահանջից, քանզի մենաշնորհը ենթադրում է իրավաբանական ուրույն կարգավիճակ: Նպատակահարմար է սույն կարգավիճակն ամրագրել ՀՀ բարձրագույն իրավաբանական փաստաթղթում՝ ՀՀ Սահմանադրության մեջ որպես եզակի լիազորություններ ու գործառույթներ ունեցող ազգային-հոգևոր հաստատություն: Նկատենք, որ ՀՀ Սահմանադրության բարեփոխման նախագծի 7.1 կետում արդեն իսկ նախատեսված է նման մի մոտեցում՝ հետևյալ ձևակերպմամբ. «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայ Առաքելական Եկեղեցու պատմական բացառիկ դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: Սակայն սույն շարադրանքում առկա «պատմական» բառը խիստ թուլացնում է Եկեղեցու դիրքը՝ կարծես ընդգծելով վերջինիս միայն պատմական դերը ու անտեսելով ներկայիս դերը: Ավելին, այստեղ հարկ է նաև հատուկ նշել, որ «Հայաստանի Հանրապետությունը ընդունում է կրոնի դերը մշակույթի ձևավորման գործում և հաշվի առնում, որ Հայոց Եկեղեցու սկզբունքները հայ ժողովրդի պատմական ժառանգությունն է հանդիսանում»:

Այլ կրոնական կազմակերպությունների կարգավիճակը

Հարկավոր է ունենալ կրոնական ճկուն քաղաքականություն, որը պետք է տարբերակված լինի հորիզոնական և ուղղահայաց ուղղություններով: **Հորիզոնական** տարբերակումը պետք է ապահովի ոլորտի կարգավորումը ամբողջ երկրի համար և առավելապես հիմնվի միատեսակության վրա՝ սահմանելով հանրապետական հիմքերը. տվյալ դեպքում՝ Եկեղեցիների հարաբերությունները պետության հետ, դրանց կարգավիճակի, գրանցման կարգի, հասարակական ու մշակութային ասպարեզներում դրանց մասնակցության սկզբունքների սահմանումը: **Ուղղահայաց** տարբերակումը պետք է ապահովի Եկեղեցիների տարբերակված իրավական կարգավիճակները:

Հավասարապաշտպական մոտեցումն այս հարցում առաջացնում է իրավական բացարձակ հավասարություն (համահարթեցում), ինչն իր հերթին ծնում է անհիմն և բռնի գործնական-փաստական հավասարեցում: Այն կարող է հակասություն առաջացնել ազգային-ավանդական և միջազգային ոչ-ավանդական արժեքների միջև և հոգևոր առումով ապակողմնորոշել հասարակությանը: Ավանդական Եկեղեցիները կարիք ունեն պաշտպանիչ կրոնական քաղաքականության: Ավանդականության ճանաչումը պետք է ենթադրի վերջիններիս հատուկ իրավական կարգավիճակով օժտում, որը թույլ կտա լուծել նրանց ոչ միայն սեփա-

[1] Ֆինլանդիայի «Ավետարանական-լութերական Եկեղեցու կազմակերպումն ու կառավարումը սահմանվում է Եկեղեցու մասին առանձին օրենքով»:

կան, այլև՝ հասարակական խնդիրները (Նկատենք, որ նման կարգավիճակ կարող է տրվել նաև մարզի շրջանակում այդ կարգավիճակի պայմաններին բավարարող կրոնական միավորմանը, որով, փաստորեն, լիովին հաշվի կառնվի տվյալ Եկեղեցու հետևորդների շահերը):

Պետությունը, իհարկե, ուշադրություն է դարձնում երկրում պատմականորեն ձևավորված դավանական իրավիճակին, միաժամանակ, աջակցության և փոխհատուցման հարցերը լուծելիս, հաշվի է առնում նաև յուրաքանչյուր որոշակի կրոնի կողմից հասարակությանը մատուցած ծառայության սոցիալական արժեքը, ինչն արտոնյալ կարգավիճակ ձեռք բերելու հնարավորություն է տալիս նաև փոքրամասնության կրոններին:

Սա ոչ թե պարզապես պետության և Եկեղեցու համատեղ գործունեություն է, այլ՝ **պետության կողմից՝ հասարակության համար կարևոր խնդիրներում Եկեղեցու մասնակցության լիարժեք իրավունքի ճանաչում**, բարոյական ու նյութական համագործակցություն կրոնական կազմակերպությունների հետ, և նրանց որոշակի արտոնությունների տրամադրում:

Պետական աջակցության աստիճանը պետք է կարգավորվի տարբեր կատեգորիայի նորմատիվ ակտերով, որոնք սահմանում են արտոնության ու մենաշնորհի տարբեր մակարդակներ.

1. **«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մասին» առանձին օրենքի ընդունում**, որով առանձնահատուկ մենաշնորհ է տրվում Հայոց Եկեղեցուն, թեև այն պետական Եկեղեցի չէ:
2. **Համաձայնագիր** պետության և **կրոնական կազմակերպությունների**, որոնք մինչև սույն օրենքի ընդունումը առկա են

   ա/ ՀՀ-ում մշտապես բնակվող տվյալ ազգային փոքրամասնության կյանքում «խորապես արմատավորված» Եկեղեցիների կամ դավանանքների միջև:

   բ/ Իր հանրօգուտ գործունեությամբ հանրաճանաչ, **այսինքն՝ իր գործունեությունը և ուսմունքը պետությունից չթաքցրած ու բացահայտ գործած և հասարակական կարգն ու բարքերը չխախտած** կրոնական միավորումների միջև:

   Պետությունն այս կամ այն կրոնի արմատավորվածության մասին որոշում կայացնում է՝ հենվելով դրա հետևորդների թվաքանակի և երկրում տարածվածության գործոնի վրա: Կրոնական միավորման հետևորդների թիվը պետք է կազմի ՀՀ բնակչության (կամ համապատասխան մարզի) բնակչության առնվազն **3%**-ը՝ շուրջ 100 000 մարդ (ինչպես, ասենք, դա արվում է քաղաքական կուսակցությունների պարագայում, երբ երկու անգամ շարունակ ընտրությունների ժամանակ 5% ձայներ չհավաքելու դեպքում այն չի կարող շարունակել իր գոյությունը): Այն պետք է վկայի «կրոնական խումբ» կարգավիճակում լինելու շրջանում իր օրինապահության, բնակչության համար հոգեբանորեն ընդունելի, հասարակությանը սոցիալապես ներդաշնակ լինելու (հետևորդները չեն օտարվում հասարակությունից...), հասարակական կառուցողական կյանքին ակտիվորեն մասնակցելու և երկրով մեկ տարածված լինելու մասին:

Առանձնահատուկ կարգավիճակը կրոնական միավորմանն իրավունք է տալիս հավակնելու պետության հետ պայմանագիր կնքելու ճանապարհով պետական աջակցություն ստանալու և մուտք գործելու այնպիսի հաստատություններ, ինչ-

պիսիք են հիվանդանոցները, դպրոցները, զինված ուժերը և այլն՝ այնտեղ գըտնըվող իրենց հետևորդների հոգևոր կարիքները հոգալու նպատակով, ազատվել անշարժ գույքի հարկից, եվիրատվության հարկումից, զինծառայությունից և այլն:

3. Խղճի ազատության մասին օրենքով կարգավորվող կրոնական միավորումներ՝ **«կրոնական խմբեր»**:
4. Որպես ոչ առևտրային (հասարակական) կազմակերպություն գրանցված կրոնական միավորումներ՝ **«վարքային կամ փիլիսոփայական խմբեր»**: Այս կարգավիճակով գրանցված կրոնական միավորումները ձեռք են բերում իրավաբանական անձի իրավունքներ, սակայն օժտված չեն պետական աջակցության հավակնելու իրավունքով: Այս կատեգորիային են պատկանում «ոչ հանրաճանաչ» հարանվանությունները, նոր կրոնական շարժումները (աղանդները), պաշտամունքներն ու այլազան խմբերը:

Վտանգավոր աղանդներ և պաշտամունքներ

Միաժամանակ, արտերկրից ՀՀ թափանցող կրոնական խմբերը հաճախ իրենց գործունեությամբ խախտում են երկրի օրենքները, ավելին՝ ամբաստանում երկրին իրենց իրավունքները ոտնահարելու մեջ:

ՀՀ իշխանությունները, քաղաքական նկատառումներից ելնելով, հաճախ անտեսում են այս խմբերի կողմից իրականացվող օրինախախտումներն ու իրավախախտումները: Բայց դա մեր երկրի շահերի հաշվին է լինում և չի կարող շարունակվել, այլ պետք է որոշակի քաղաքականություն մշակվի և նրանց գործունեությունը բացահայտորեն և հստակորեն կարգավորվի, իսկ իրավախախտումների դեպքում հրապարակայնորեն դատապարտվի օրենքի պահանջի համաձայն:

Աղբյուրներ

- http:/www.orthodoxia.org/print/1/1/5/20.aspx;
- Информационно-аналитический журнал института Религии и право "Религия и право", N1-2 (4-5), Москва.
- "Религия и СМИ", Справочно-информационный портал, "Русский журнал" 20.01.04г.
- Журнал "Религия и право", Институт Религии и Права, Москва, выпуск N 1-2 (4-5), 1998г., ст 48-50, Екатирина Смыслова "Религиозный плюрализм: Равенство без уравниловки".
- http://cisar.org/991206a.htm
- http://www.cesnur.org/2001/fr_law_en.htm
- http://www.geosities.com/Athens/Olympus/2227/enquette.html